ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՌԱՆՁՆԱՊԵՍ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

----   ----------- 2017 թվականի № - Ն

ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՌԱՆՁՆԱՊԵՍ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

1. Հաստատել «Պարտադիր ապահովագրման ենթակա առանձնապես վտանգավոր արտադրական օբյեկտների ցանկ»-ը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ　　　　　　　　　　　　　　ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված

ՀՀ կառավարության 2017 թվականի

_________ _____ № - Ն որոշման

ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՌԱՆՁՆԱՊԵՍ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՑԱՆԿ

Հ/Հ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

I. Քիմիայի ոլորտ

1. Քլորի և դրանց միացությունների արտադրության օբյեկտներ
2. Սինթետիկ կաուչուկի արտադրության օբյեկտներ
3. Ացետիլենի արտադրության օբյեկտներ
4. Ամոնիակի արտադրության օբյեկտներ
5. Պարարտանյութերի արտադրության օբյեկտներ
6. Սինթետիկ հիմքով լաքերի և ներկերի արտադրության օբյեկտներ
7. Քիմիական ռեակտիվների արտադրության օբյեկտներ
8. Նավթավերամշակման և նավթաքիմիական մթերքների արտադրության օբյեկտն
9. Քիմիա-դեղագործական, սպիտակուցա-վիտամինային նյութերի արտադրության
10. Ջրի էլեկտրոլիզի եղանակով ջրածնի ստացման արտադրության օբյեկտներ
11. Ամոնիակային սառնարանային կայանքների օբյեկտներ

II. Մետաղագործության (սև,գունավոր) ոլորտ

12. Հումքի բովախառնուրդի նախապատրաստման արտադրության օբյեկտներ
13. Թրծման վալցամշակման արտադրամասերի օբյեկտներ
14. Ձուլման և էլեկտրաջերմային եղանակով մետաղների ստացման արտադրամաս
15. Մետաղների զտման արտադրամասերի օբյեկտներ
16. Փոշեկորզման և գազազտման օբյեկտներ
17. Գունավոր մետաղների վերամշակման օբյեկտներ
18. Կարծր համաձուլվածքների և դժվարահալ մետաղների ստացման օբյեկտներ
19. Սնդիկի, ծծմբային նատրիումի, ծծմբային թթվի և դրանց միացությունների ստա օբյեկտներ
20. Արգոնի, ազոտի արտադրության օբյեկտներ
21. Խողովակների տաք և սառը գլանման օբյեկտներ

III. Հանքարդյունաբերության ոլորտ

22. Օգտակար հանածոների ստորգետնյա եղանակով մշակվող հանքահորեր, հանք հանքափորվածքներ
23. Հանքահարստացման (հարստացուցիչ) ֆաբրիկաների օբյեկտներ
24. Հանքահորաշինական օբյեկտներ
25. Հորատապայթեցման տեղամասերի օբյեկտներ
26. Ներհանքային (հանքահորային) տրանսպորտի և վերհան կայանքների օբյեկտն
27. Պոչամբարային (շլամային) տնտեսության օբյեկտներ
28. Ապարների լցակույտերի օբյեկտներ
29. Արդյունաբերական պայթուցիկ նյութերի և պայթեցման միջոցների արտադրությ պահման օբյեկտներ, այդ թվում՝ստորգետնյա օբյեկտներ

IV. Գազի և հեղուկ վառելիքի տնտեսության ոլորտ

30. Հեղուկ գազի անշարժ և շարժական գազալցավորման կայաններ
31. Ավտոմոբիլային գազալցավորման ճնշակային կայաններ
32. Ստորգետնյա գազահորեր
33. Գազի և նավթամթերքների պահման մեծածախ պահեստարաններ

34. Հեղուկ նավթամթերքների (բենզին,դիզվառելիք) ավտոմոբիլային լցավորման

կայաններ

VI. Շինարարական նյութերի արտադրության ոլորտ

35. Ցեմենտի արտադրության օբյեկտներ
36. Կրի (դոլոմիտի) արտադրության օբյեկտներ

VII. Սննդարդյունաբերության ոլորտ

37. Բուսական հումքի մշակման, պահման պայթյունահրդեհավտանգ արտադրակա

VIII. Ամբարձիչ սարքավորումների ոլորտ

38. Մարդատար ճոպանուղիների օբյեկտներ
39. Կարուսելների օբյեկտներ